# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ**
**ararartbank@araratbank.am**

**Հաշվետվություն թիվ 04, 16.05.2022թ.**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 18.04.2022թ. որոշում (որոշում ՈՐԽ0102-04/Լ) Կոմիտաս մասնաճյուղի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին:

AraratBank

0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-04/Լ
Դաս: ԾԳ
«18» ապրիլ 2022թ.

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## ԿՈՄԻՏԱՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^6$-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվում է Կոմիտաս մասնաճյուղի գործունեությունը նոր տարածքում ծավալել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 38/02 որոշմամբ հաստատված Կոմիտաս մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Միեր Անանյանին ապահովել Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 15/2 հասցեում բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Կոմիտաս մասնաճյուղի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության գրանցման հետ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Գ. Հովհաննիսյան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ · ARARATBANK OJSC · АРАРАТБАНК ОАО · 02500518